**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 72-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 954.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Հատուկ պահպանվող տարածքների հողերից 954.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հանրապետության Հողային օրենսգրքի 82-րդ հոդվածը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Հատուկ պահպանվող տարածքների հողերից 954.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

Դեմ -1

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

Ձեռնպահ -3

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ
ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

Առյուսակ.

Դիլիջանի համայնքի ավագանու
2020թ. հունիսի 26-ի թիվ 72-Ա որոշման

| Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի մրցույթ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը / Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ | Սահմանափակումներ |
| 1 | Լոտ 11/Վ-20/ | գ. Թեղուտ, 2-րդ փողոց 39/3 | 11-029-0054-0008 | 954.0 | Հատուկ պահպանվող տարածքների հող | հանգստի համար նախատեսված | բանջարաբուծություն | 25 տարի | 2,862 | առանց կառուցապատման իրավունքի. գծային ենթակառուցվածքների օտարման և իրավաբանական անձանց սանիտարապաշտպանական գոտիներում գտնվող հողամաս է |

*Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ* *Ս. Եգանյան*